















ուղեցապատումը<sup>41</sup> սկսելիս քաղաքապետարանը կառուցապատողների հետ սկսել է պայմանագրեր կնքել լոտերի վաճառքի վերաբերեալ, բայց պայմանագրերում յուշարձան-չէնքի մասին որեւէ նշում չի եղել, քանի որ այդ ժամանակ կառավարութեան որոշում չի եղել այդ շէնքերի՝ յուշարձան լինելու վերաբերեալ: Այս քայլին է, որ յաջորդում է, Պատմութեան ու մշակոյթի յուշարձանների պահպանութեան գործակալութեան Երեւանի տարածքային բաժնի պետի իսկ ձեւակերպամբ, «կառուցապատման ագրեսիան»<sup>42</sup>:

\* \* \*

Արդ, ինչպէ՞ս էր մայրաքաղաքի պատմական կենտրոնի արմատական ձեւափոխման գործընթացը ընկալուում եւ գնահատուում Հասարակութեան կողմից, մասնադիտական շրջանակներում, մեկնաբանում եւ վերլուծում համեմատաբար անկախ մամուլում: Առկայ արձագանգներում (որոնց մի մասը ներկայացուեց վերելում), զգացմունքային ու բարոյական, գնահատականներից զատ, զատորոշում են քաղաքաշինական բնոյթի դիտարկումներ, շեշտադրումներ երեւոյթի անօրինական եւ շահաբեր լինելու մասին, որ դասիալ քաղաքականութիւն է տուրիզմի զարգացման, բնապահպանութեան տեսանկիւններից, որ այդ քայլը հաւասարազօր է պատմական յիշողութեան ոչնչացման եւ իր արդիւնքներով հաւասարազօր է մշակութային ցեղասպանութեան, որ մեղաւորների շարքում են պետութիւնը, անուղղակիօրէն նաեւ՝ սփիւռքահայութիւնը:

41 Հիւսիսային պողոտայի կառուցումն իրականացնում է ռուսական «Nord Island» ընկերութիւնը. ծրագրի ընդհանուր արժեքն է \$ 150 մլն: \$-u Millions of dollars spent on construction in Armenian capital in 2004 – mayor.

42 Տե՛ս Յ. Մարութեան, Մշակութային եղեռն:

\*

Ղարաբաղեան շարժումը բերեց արմատական փոփոխութիւնների հասարակութեան կեանքում. կործանուեց Խորհրդային Միութիւնը, սկսուեց փոխուել սոցիալ-տնտեսական ֆորմացիան, գաղափարախօսութիւնը, ձեւաւորուող պրագմատիզմի դարաշրջանն իր հետ բերեց անսասան թուացող արժէքային ընկալումների վերանայման գործընթացի:<sup>43</sup> Բարեհունչ «անցումային» անուանում ստացած տնտեսութեան (որն իրականում «վայրենի կապիտալիզմի» շրջանն է) բնորոշ գծերից մէկը կապիտալի տենդագին որոնումն էր, ոչ մի միջոցների առջեւ կանգ չառնելով՝ գումարներ եւ սեփականութիւն կուտակելու անյազ ցանկութիւնը: Նման հնարաւորութիւն ընձեռում էր կամ պաշտօնական դերքի չարաշահումը (այլ կերպ ասած՝ կաշառակերութիւնը, բարձր հովանաւորչութեամբ պայմանաւորուած պետական գոյքի թալանը) կամ, լայն առումով, առեւտուրը: Հայաստանեան իրականութիւնում այս երկու գործօններն էլ աշխատեցին: Առեւտրի դէպքում կարող էր շահաւէտ լինել միայն այն առեւտուրը, որը, Երեւանի պարագայում, տարւում էր մայրաքաղաքի գործարար եւ մտաւոր կենտրոնում: Եւ սկսուեց իշխանութիւնների, մեղմ ասած, ոչ անշահախնդիր օժանդակութեամբ Երեւանի կենտրոնի աւերումը: Թոյլատրուեց ամէն ինչ (տե՛ս անդրադարձը վերելում), իսկ տեղական եւ կենտրոնական իշխանութիւնների, կուսակցական եւ պատգամաւորական գործիչների ունեցած ու չունեցած ազդեցութիւնները գործի դրուեցին քաղա-

43 Անդրադարձներ այս գործընթացին տե՛ս, օրինակ, Յ. Մարութեան, Էթնիկ ստերեոտիպ եւ սովորութային իրաւունք. – Ար, 1993, 9-15 յունիս, թիւ 16, էջ 15 եւ 18-24 յունիս, թիւ 17, էջ 14. Յ. Մարութեան, Փոխառում եւ արդեօք հայերը... (ազգաբնակչան ղիտարկումներ). – Պատմութիւններ աղքատութեան մասին. Արթուր եւ ռուսամասիրութիւններ, Եր., 2001, էջ 392-406:

քի կենտրոնում տարածքներ վերցնելու եւ նոր կառուցապատումներ անելու նպատակով:<sup>44</sup> Քաղաքի պատմական, փոքր կենտրոնն առաձգական չէր եւ, բնականաբար, շուրջ մէկ հարիւրամեակի ընթացքում ձեւաւորուած իր կառուցապատմամբ բնաւ չէր համապատասխանում իշխանական եւ տնտեսական լծակներ ունեցող ուժերի ախորժակներին:

Այս պարագայում կրկին շրջանառութեան մէջ դրուեց Երեւանի թամանեանական նախագծով նախատեսուող Հիւսիսային եւ Գլխաւոր պողոտաների խնդիրը:

\*

Մինչ բուն խնդրին անցնելը, մի փոքր անդրադարձ անենք «յուշարձան» հասկացութեան ընկալումների ձեւափոխումների գործընթացին: Վերն արդէն նկատուեց, որ Խորհրդային իշխանութեան առաջին տասնամեակներին, որպէս պատմական յուշարձաններ, առաջին հերթին ընկալուում էին հին, նաեւ պաշտամունքային նշանակութեան կառոյցները: Պատահական չէ, որ յուշարձանների պահպանութեանն ուղղուած 1923 թ. դեկտեմբերի 18-ի Հայաստանի Ժողկոմխորհի դեկրետով հիմնուած կառոյցը կոչուում էր Հնութիւնների պահպանութեան կոմիտէ:<sup>45</sup> Բնութագրական է, որ մինչ օրս ժողովրդի լայն խաւերի շրջանում պատմամշակութային յուշարձանների պահպանութեամբ զբաղուող մարմինը անուանուում է Հնութիւնների կոմիտէ, ինչն անուղղակիօրէն ցոյց է տալիս, որ յուշարձան հասկացութիւնը, չնայած դրա բովանդակութեան ընդլայնմանն ուղղուած որոշումների եւ օրէնքների յատակեցումներին, առ այսօր ընկալ-

44 Մանրամասն տե՛ս Յ. Մարութեան, Մշակութային եղեռն:  
45 Տե՛ս Կ. Յովհաննիսեան, Ծարտարապետական յուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Եր., 1978, էջ 4-5. Եր. Ա. Թամանեան, Աշխ., էջ 6:

ւում է՝ որպէս առնուազն դարերի պատմութիւն ունեցող, գերազանցապէս հնագիտական եւ պաշտամունքային կառոյց (պեղավայր, դամբարան, եկեղեցի, խաչքար եւ նիւթական մշակոյթի նման կարգի տարրեր): 1924 թ. ապրիլին հանրապետութեան բնակչութեանն ուղղուած կոմիտէի անդրանիկ կոչը վերնագրուած էր «Պահպանեցէք Հնութիւնները»: Այստեղ ընդգծւած էր պատմական յուշարձանների նշանակութիւնը եւ միեւնոյն ժամանակ պահանջը՝ հնութիւնների պահպանութեանն ուղղուած հսկողութիւն:<sup>46</sup> Արդէն 1924 թ. արթուն հսկողութիւն:<sup>46</sup> Արդէն 1924 թ. կազմակերպուած գիտարշաւների արդիւնքում ստեղծուեց Հայաստանի պատմական յուշարձանների անդրանիկ ցուցակը, որն ընդգրկում էր 80 «Հիմնականում հանրապետական յուշարձան, ինչպէն նաեւ Խորհրդային յուշարձանախմբերը»<sup>47</sup>: Յաւանութիւն չունեցող անդրադառնալ խնդրի պատմական յուշարձանների վերանորոգումը տակաւ յուշարձանների վերանորոգումը (1978) աշխատական Հայաստանում» (1978) աշխատութեան մէջ բերուած են բազմաթիւ օրինակներ հնագիտական յուշարձանների պաշտամունքային շէնքերի կոնսերվացիայի, պաշտամունքային շէնքերի նորոգիչային, պաշտամունքային շէնքերի նորոգման եւ վերականգնման, ճարտարապետական կառոյցների, կոթողային յուշարձանների եւ խաչքարերի վերանորոգման եւ ամրացման մասին, սակայն բացակայում է անդրադարձ դիւղական եւ քաղաքային բնակելի տների, հասարակական նշանակութեան քաղաքային շինութիւնների կոնսերվացմանը, նորոգմանը կամ վերականգնմանն ուղղուած գործունէութեանը, ինչը պարզապէս նշանակում է, որ այդպիսի աշխատանքներ չեն տարուել:

46 Տե՛ս Կ. Յովհաննիսեան, Աշխ., էջ 38:  
47 Նոյն տեղում, էջ 40




















ՀԱՅՈՑ ԳՈՐԳԵՐԻ «ՏԱՊԱՍՏԱ» ԿՈՉՈՒԱԾ ՏԵՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Աշխույզ Պողոսեան

Նրկողայոս Մառը, քննութեան առնելով խալիֆաթի տարածքում յատկապէս բարձր գնահատուող «ոտքի համար» նախատեսուած հայկական փոքրաչափ գորգերի մասին արաբ աշխարհագիր ալ-Իզրիսիի հաղորդումը, նշել է, որ դրանք պէտք է նոյնացնել ԺԱ դ. վերաբերող վրացական մի աղբիւրում յիշատակուած «հայկական տաբաստո»-ների հետ:<sup>1</sup>

Ակադեմիկոս Բ. Առաքելեանը Իզրիսիի նշած գորգերը նոյնպէս համարել է տապաստ կամ տապաստակ: Նա գտնում է, որ դրանք օգտագործուել են աղօթքի ժամանակ ու միաժամանակ՝ որպէս ուտելիք տեղադրելու գետնատարած սփռոցներ, յարմար էին նաեւ առեւտրական քարաւանների ուղեւորների համար:<sup>2</sup> Որպէս այդօրինակ եզրայանգումների հիմնաւորում նա վկայակոչում է Ե-Ջ դդ. արուած Յովհան Ոսկեբերանի հայերէն թարգմանութիւնից մի քաղուածք, որում ասուած է «ընթրեաց առնեն եւ տապաստակս եւ բարձս բազումս նմին պատրաստականս»:<sup>3</sup>

Տապաստա բառն, ըստ Ստ. Մալխասեանցի, նշանակում է սփռոց, գորգ, օթոց, որի վրայ նստում են ուտելու ժամանակ:<sup>4</sup>

Տապաստա հասկացութեան մասին պատկերացում կազմելու համար պէտք է կարեւորենք նաեւ դրա յունարէն՝ tapis, ու լատիներէն՝ tapes, նախնական ձեւերը, որոնց տարբերակները գործածական են եւ-

րոպական մի շարք լեզուներում (օրինակ՝ իտալերէնում՝ tappeto, գերմաներէնում՝ teppich եւ այլն) ու բոլորն էլ նշանակում են գորգ:<sup>5</sup>

Հայոց մէջ գորգագործական մշակոյթը յայտնի էր աւելի վաղ ժամանակներից, քան թարգմանական գրականութեան մէջ յունարէն խնդրոյ առարկայ բառի յայտնուելն էր, ուստի եւ ենթադրելի, որ հայերէնում եղել են գորգ բառի տարբերակներ ու հոմանիշներ: Կոնկրետ գորգ բառի ծագումնաբանութեան առումով մենք կարելորում ենք յատկապէս խեթերէնից յայտնի կուրկաս<sup>6</sup>, հայերէն ձունձ, ձորձ բառերը: Դրանցից բացի, կային նաեւ այնպիսի արտաբանումներ, որոնցով գորգերի տեսակները տարբերակուած էին՝ ըստ գործածման ոլորտների:

Խնդրոյ առարկայի առումով յատկանշական է այն, որ այդ սկզբունքը կար նաեւ զարգացած միջնադարեան ժամանակաշրջանի արաբական միջավայրում: Ըստ այդմ՝ ընդունուած էին յատակի գորգ եւ ուղեգորգ՝ գորգ, որի վրայով, ըստ վաւերականութիւնի, էէր թոյլատրուած քայլել, աղօթքի գորգ, ծածկոց եւ այլ տեսակի գորգեր մատնանշող հասկացութիւններ, որոնցից իւրաքանչիւրն ունէր որոշակի անուանում՝ Նամատ, Մահֆուր եւ այլն:<sup>7</sup>

1 Н. Марр, Ани, ес., 1939, ст. 237-238.  
 2 Բ. Առաքելեան, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հտ. 2, Եր., 1964, էջ 293:  
 3 Բ. Առաքելեան, նոյն տեղում  
 4 Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. Դ, Եր., 1945, էջ 375

5 Տե՛ս Մանուէլ Վրդ. Քաջունի, Բաղադրութեան եւ գիտութեան եւ գեղեցիկ դարձութեան, հտ. երկրորդ, Վենետիկ-Ս. Ղազար, 1892, էջ 699:  
 6 Г. Капанцян, Общие элементы между хетским и армянским языком.- Историко-лингвистические работы, Ереван, 1957, ст. 354- 355.  
 7 А. Мец, Мусульманский ренессанс, М.-Л., 1973, ст. 365.